

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԴԻՐ

ՁԱՐԾԱՅԻՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԵՋԻՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 29

“ՏԱՃԱՐ,”

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար սարեկան	35 դրու
Գաւառաց համար սարեկան	40 »
Արսասահմանի համար սարեկան	10 ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Բաժանորդագիրները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Ջարմար Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեիքթաշ, Հայոց եկեղեցի

درسمادته بشکطاشده ارمنى کليساسنده (داجار) غزتهسى مدیرى پاپاس زارمار

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

Չարմարքըլար, Յակոբեան խան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէզիւրեան

ՎԱՐՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուքիաս Բնյ. Պալղճեան
5. Տ. Պողոս Բնյ. Պէյաղճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Սնանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ծէպէճեան

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«Տ Ա. Ճ Ա. Ր» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱՂԻՐԻՍՆՈՒՊՈԼԻՍ.—Առաջն. Փոխանորդ
Տ. Արսէն Բնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍՍՆԴՐԻՍ.—Տ. Ռուբէն Բնյ. Գա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գաֆթանեան
ԱՅՆԹԱՊ.—Տ. Գարեգին Բնյ. Պողարեան
ԱՅԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Խաչատուր
Ա. Բնյ. Տօնէլեան
ԲԱՐԵՐԴ.—Մ. Սանոսեան էֆ.
ԳԱՂԱՏԻՍ.—Առաջնորդ Տ. Բարգէն Եպսկ.
Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ.—Տ. Յարութիւն Բնյ. Սար-
գիսեան
ԵԴԵՍԻԱ.—Ք. Թիւրաքեան էֆ.
ԵՕԶՂԱՏ.—Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.
Դրամքեան
ԵՐԶՆԿԱ.—Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ.
Փէրտանճեան
ԶՄԻՒՌՆԻԱ.—Տ. Յարութիւն Բնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ.—Տ. Գալուստ Բնյ. Տ.
Գալուստեան
ԽԱՐԲԵՐԴ.—Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ
Ծ. Վրդ. Ասլանեան
ԿԱՐԻՆ.—Առաջնորդ Տ. Սմբատ Եպսկ.
Սաւաթեթեան
ԿԻՐԱՍՈՆ.—Մաթոս էֆ. Թոքատլեան
ԿԻԻՄԻԻԼՃԻՆԷ.—Տ. Ներսէս Բնյ. Նշան-
եան
ՀԱԼԷՊ.—Առաջն. Տեղապահ Տ. Շահէ
Վրդ. Գասպարեան
ՄԱՆԶԷՍԹԸՐ.—Առաջնորդ Տ. Գէորգ Ս.
Եպսկ. Իւթիւճեան
ՄԱՐԱՇ.—Տ. Հմայեակ Բնյ. Վարժա-
պետեան

ՄԱՐԶՈՒԱՆ.—Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ.—Տ. Ոսկի Բնյ. Պիպիեան
ՆՈՐ ԶՈՒՂԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Բազարատ Վրդ. Վարդապարեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Նաթան Բնյ.
Տատեան
ՈՒՇԱՔ.—Կարապետ էֆ. Բէհեանեան
ՊԱՆՏՐՄԱ.—ՊԱԼԷՔԵՍԻՐ.—Առաջնորդ Տ.
Կարապետ Եպսկ. Մաղլըմեան
ՊԱՂՏԱՏ.—Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպսկ. Կէօմրիւքճեան
ՊԱՅՐԱ.—Կարապետ էֆ. Բէրթմէնեան
ՊԱՐՏԻԶԱԿ.—Յովհաննէս էֆ. Տ. Կա-
րապետեան
ՊՐՈՒՍԱ.—Առաջնորդ Տ. Յովհաննէս Ս.
Եպսկ. Արշարունի
ՌՈՒՍՃՈՒՔ.—Տ. Մկրտիչ Բնյ. Մըրճ-
նիկեան
ՌՏՈՍԹՈ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բար-
թոլ Ա. Բնյ. Թաղմճեան
ՍԱՄՍՕՆ.—Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.
Օտապալեան
ՍԵՔԱՍՏԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բնյ. Օտապալեան
ՍԵԼԱՆԻԿ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բնյ. Թուխմանեան
ՍՕՅԻԱ.—Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպ-
եան
ՏԱՐՏԱՆԷԼ.—Տ. Դիոնիսիոս Բնյ. Տրէդ-
եան
ՏԷՏԷ—ԱՂԱՃ.—Տ. Գարեգին Բնյ. Տէօվ-
լէթեան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ.—Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԳԱ.—Տ. Գէորգ Բնյ. Թէրզեան
ՏՓՂԻՍ.—Հ. Առաքելեան
ՓԱՐԻԶ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Վառմշա-
պուհ Բնյ. Քիպարեան
ՔՂԻ.—Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ.—Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՖՐԷԶՆՕ.—Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 29

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Աստուածաշունչին ազդեցութիւնը, ՍՈՒՐԵՆ Վ. ԳԱԼԵՄԵԱՆ.—Բարեկամութեան համոյքը, ԼԵՒՈՆ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ.—ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ՊԼԷՏ Խ. ՄԻՍԱՐԵԱՆ, (Բ.) ԱՏՐՈՒՇԱՆ.—Եկեղեցական բարեկարգութիւնը, ԵԿԵՂԵՑԱՍԷՐ.—Հանգիստ Տ. Յարութիւն Արքեպ. Վեհապետանի եւ կենսագրական նօթիր, ԽՄԲ.—Պատմ. Հայ. Ձայնագրութեան, (Շար.) ԱՐԻՍՏ. ՔԶ. ՀԻՍԱՐԼԵԱՆ.—Բառարան Ս. Դրոց քննադատութեան, ՂԵՒՈՆԴ Մ. Վ. ԴՈՒՐԵԱՆ.—ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ, Շարժուան լուրեր եւ ժողովոց որոշումներ:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Ամենայն գիրք Աստուածաշունչի եւ օգտակար ի վարդապետութիւնն են, եւ ի յանդիմանութիւնն եւ յուղորթիւնն եւ ի խրատ արդարութեանն: (Բ. Տիմ. Գ. 16)

«Հոմերոս կը խանդավառէ, Հերոդոտոս կը հետաքրքրէ, իսկ Ս. Գիորգը կը շինէ»:

(*)

Տիեզերքի վրայ գտնուած բոլոր կրօնքներն ընդհանրապէս աստուածային ծագումով մը կը ներկայանան մեզի: Կրօնքներու վերագրուած այս երկնային ծագումը ցոյց կուտայ, ի հունին մարդոց մէջ եղած, դժբաղդոյն չոյսի մը անհրաժեշտութիւնը: Թէ՛ քրիստոնէական եւ թէ՛ միւս բոլոր կրօնքներուն համար հասարակաց է այս. եւ ինչպէս անոնք, նոյնպէս քրիստոնէութիւնն ալ ունի իր նուիրական գիրքերը, որոնց

աստուածայնութիւնը (divinité) հաստատելու համար պատճառաբանելու եւ քննելու իրաւասութիւնը կուտայ մեզի եւ կը հրամայէ իսկ. «Բնեցէք զգիրս...»

Բնեցէք ուրեմն թէ որոնք են Ս. Գիրքին աստուածայնութեան ապացոյցները եւ ինչ պատճառներով արժանի է մեր վստահութեան:

Ա. — Ս. Գիրքին միութիւնը (unité) . — Ստոյգ է որ Ս. Գիրքը նկարագրով, զարգացումով եւ տարբեր պայմաններու տակ ապրող անհատներէ խմբագրուած է. բայց իր լմանութեանը մէջ համաձայն է կրօնական ճշմարտութեան հարցի մասին: Իր հեղինակները՝ որոնք իշխաններ, վարդապետներ (docteur), հովիւներ եւ արուեստագէտներ են, տարբեր ուղղութեամբ եւ տարբեր ժամանակներու մէջ խմբագրած են զայն: Եւ եթէ երբէք Ս. Գիրքը քննադատօրէն ուսումնասիրենք, պիտի տեսնենք որ հեղինակներուն տաղանդը, սովորութիւնները եւ նկարագիրները հակասեցնելու մը կը կազմեն իրենց ստանձնած

պաշտօնին հետ։ Բայց հակառակ այդ հակոտնէութեան, իրենց մշակած նիւթերը՝ պատմութիւն, մարգարէութիւն, վարդապետութիւն և բարոյականութիւն, հրաշալիօրէն զիրար կը լրացնեն, և երկնային միութիւն մը կը նշմարուի անոնց ամենուն մէջ։ Կարծես դաշնակի ընդարձակ ստեղծողարի մը առջեւ անցած, իւրաքանչիւր հեղինակ իր պատմութիւնը իր երգը կը նուագէ, և այս այլազան նուագումները հիանալի ներդաշնակութիւն մը կը կազմեն։

Կիյօ կ'ըսէ, «Աստուածաշունչը նկարի պատմութիւն մը կը նմանի, որուն վեց տարբեր դարերու պատկանող արուեստագէտներ յաջորդաբար եկած և վրձինի հարուած մը տուած են, ու մենք այժմ կը հիանանք անոնց գործին ամբողջական ներդաշնակութեան և գեղեցկութեան վրայ»։ Աստուածաշնչական գրականութեան մէջ միակ իրողութիւն մըն է այս, զոր ներշնչականութեամբ միայն կարելի է բացատրել։

Բ. — Իր բնութիւնը. — Եթէ երբէք Ս. Գրքին բնութիւնը ուսումնասիրենք, պիտի տեսնենք որ անիկա կը գոհացնէ մարդուն հոգեկան բոլոր պէտքերը։ Ասով չենք ուզեր ըսել թէ հոն պարփակուած բոլոր ճշմարտութիւնները ըմբռնելի են մեզի համար։ Ստոյգ է որ անիկա անհասկնալի խորհուրդներ (mystère) ունի, որոնք կապացուցեն իր աստուածայնութիւնը։ Եւ սակայն որքան ալ անբմբռնելի ըլլան անոնք, ինքնին գործնական և զիւրմբռնելի նկարագիր մ'ունին հոգիի աչքով գիտողներու համար։ Որովհետեւ նախ՝ Աստուծոյ գաղափարը կուտան աշխարհի, գաղափար մը ո'չ թէ վերացական, այլ որոշ և կենդանի, այնպէս որ Ս. Գիրքի առաջին էջէն սկսեալ կը սորվինք պաշտել զԱստուած, իբրեւ ըստեղծիչը երկնի և երկրի։ Երկրորդ՝ փրկութիւնը կ'աւետեն աշխարհի փրկութիւնը ո'չ թէ միայն ներկային այլ ապագային, այնպէս որ Գողգոթայի խաչը կը ցցուի մեր առջեւ, իբրեւ նշան կատարեալ փրկութեան։ Երրորդ՝ պատմականութեան սեղանը կ'արծարծեն մարդոց մէջ։ Մովսէս և առաքելները կ'յայտնեն մեզի բարոյական օրէնքին ճշմարիտ տեղը, Դաւիթի ցոյց կուտայ

մեզի սիրոյ Աստուածը, որ փոխադարձ պարտականութեան գիտակցութիւն կը պահանջէ։

Դ. — Աստուածաշունչին ազդեցութիւնը անհասկերուն վրայ. — Ամէն անհատի համար անհրաժեշտ է կրօնական և բարոյական ճշմարտութիւնը. պարտականութեան օրէնքը ի բնէ քանդակուած է իւրաքանչիւր մարդու սրտի խորը. այդ խորութեանը մէջ անոր հետ միացած են պարտականութեան և գիտակցութեան հակառակ բազմաթիւ տարրեր։

Ինչ ևնք մենք, ուսկից կուգանք, ո՞ւր կ'երթանք, ի՞նչ է մեր ճակատագիրը։ Ահա, ծանրակշիռ հարցեր, որոնցմով դարեր շարունակ փիլիսոփաները տանջած են իրենց միտքը։ Աստուածաշունչը՝ սակայն՝ կը սորվեցնէ մեզի թէ մենք Աստուծային ցեղին կը պատկանինք, Աստուծոյ սիրած ենք, դարձեալ դէպ ի Աստուած պիտի երթանք, թէ մեզք առեւեւոյթ ազդեցութիւն մ'ունի միայն և թէ ամեն ինչ պիտի կարգաւորուի Բրիտանոսով։ Իւրաքանչիւր անհատ պէտք ունի մխիթարութեան։ Անկարելի է մեզի համար խոյս տալ տանջանքներու օրէնքէն։ Բայց ո՞վ է այն բարեկամը որ մեր տանջանքի ժամերուն պիտի սրբէ մեր արցունքները։ Ս. Գիրքը ցոյց կուտայ եւ կը խոստանայ մեզի թէ Բրիտանոս է այն Այս խոստումը խաբէութիւն մը թող չթուի մեզի, որովհետեւ Դաւիթներ, Յոսիֆ, բոլոր տանջուածները, հիւանդները, հարստահարեալներն ու թշուառները ապացուցած ին անոր ճշմարտութիւնը, և իբրեւ անհատներ փորձառաքար ցոյց տուած են այդ երկնային Գրքին իրենց անձին ներգործած բարոյական ու հոգեկան գերազանց ազդեցութիւնը։

Դ. Աստուածաշունչին ազդեցութիւնը Եկեղեցիին վրայ. — Եկեղեցական պատմութիւնը որոշակի ցոյց կուտայ թէ Եկեղեցին այնքան երկար հալածանքներու հերոսաբար կուրծք տուած է, իրեն զօրավիգ ունենալով Աստուածաշունչը։ Անիկա այն Գիրքով մնած, անով ընդհանրացած և այդ միեւնոյն սնունդով սնուցած է իր հաւատացեալները։ Իսկ եթէ պատմութեան ընթացքին մէջ

ներքին կազմակերպութեան տեսակէտով անոր փոփոխակի տկարացումը կը տեսնենք, պատճառը ոչ այլ ինչ է, եթէ ոչ այդ սնունդին զգալի նուազութիւնը, այսինքն եկեղեցիին ցուրտ վերաբերումը դէպի Աստուածաշունչը: Երեւակայեցէք Եկեղեցւոյ վիճակը միջին դարու մէջ, ուր կրօնական ամեն կազմ ու սարքէ աւելի նոխամեծար կը համարուէր աւանդութիւնը: Քաղաքական և կրօնական տեսակէտով *crise*ի չորջանն էր այն. բայց երբ Ս. Գիրքը իր առաջին ու բարձր տեղը գրաւեց, երբ միջին դարը վերջացաւ, երբ կրօնա-քրիստոնէական շրջանն իր ընթացքը բոլորեց, նոր չէնքը դարձեալ բարձրացաւ, Աստուածաշունչով մնած ու ծաւալած Եկեղեցին վերածնաւ աւանդութեան աւերակներուն մէջէն:

Ե.—Աստուածաշունչին ազդեցութիւնը ընկերութեան վրայ. — Մարդկային ընկերութիւնն իսկ զգացած է կրօնական այս հաստատութեան հակահարուածը: Միջին դարուն երբ Եկեղեցին վերածնաւ, Ս. Գիրքն յառաջդիմութեան և քաղաքակրթութեան հատիկները սերմանեց նոր աշխարհին մէջ: Այդ վերածնութեան շնորհիւ ընկերութեան մէջ ծնաւ նաեւ փոխադարձ պարտականութեան սէրը, խղճի գիտակցութիւն և բարոյականութեան զգացումը, որոնց վրայ հիմնուած է արդէն Աստուածաշունչը, և որոնցմով պէտք է կենսաւորուին ամբողջ մարդկութիւնը, իբրեւ անմիջական ազդեցութիւնը Ս. Գիրքին, որ իսկապէս թէ՛ անհատին, թէ՛ մարդկութեան և թէ Եկեղեցիին համար ազատութեան և փրկութեան Ս. Տապանակը հանդիսացած է:

Այս պէտք է ըլլայ ուրեմն մեզի՝ Բրիտանական երուս համար ուղիղ և ողջամիտ ըմբռնումը՝ Աստուածաշունչի ազդեցութեան և ներշնչականութեանը մասին, վստահ իբրեւ խղճի և բանականութեան հակառակ շարժում, կարելի չէ ջնջել Ս. Գիրքի Աստուածաշնչական նկարագիրը և դասել զայն հոսարակ մատենադրութեանց շարքը: Եթէ կայ արդարեւ յայտնեալ կրօն, ինչ որ անկարելի է չըմբռնել, եթէ կայ Աստուածահիմն Եկեղեցի, զոր պարտինք ընդունել,

պէտք է ըլլայ նաեւ Աստուածաշունչ գիրք, որ է պահպանակ յայտնեալ կրօնի գրաւոր ճշմարտութեանց: Երբ ընդունինք այս ճշմարտութիւնները, պիտի գոչենք մեծ փոփոխային նման. «Հոմերոսը կը խանդավառէ, Հերոդոտոս կը հետաքրքրէ և Ս. Գիրքը կը շինէ», և Առաքեալին նման ներքնապէս պիտի համոզուինք ու պիտի հաւատանք թէ՛ «Ամենայն գիրք Աստուածաշունչը և օգտակարք ի վարդապետութիւն են, և ի յանդիմանութիւն և յուղութիւն և ի խրատ արդարութեան»:

Սկիւսար

ՍՈՒՐԷՆ ՎԱՐԴ. ԳԱԼԵՄԵԱՆ

ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԲԱՐԵԿԱՍՈՒԹԵԱՆ ՀԱՃՈՅՔՆԵՐԸ

Ընկերական զգացումը զոր ունինք ամէն մարդու համար անխտիր, մեզ կ'ընծայէ այն տեսակ հաճոյքներ որոնք կը զանազանին մեզի առաւել կամ նուազ համակրութիւն ներշնչող անձին համոմատ: Մասնաւոր հաճոյք մը կը զգանք միմիայն մեր նմաններէն մէկը տեսնելով, առանց կարենալ տալու անոր պատճառը: Համակրելի, սիրելի կը գտնենք զայն, և կ'ուզենք մեր համակրութիւնը յայտնել անոր, մօտենալ անոր:

Համակրութիւնը շատ անգամ միաժամանակ կը ծնի երկու տնձերու կողմէն ալ: Հաճոյքը կը զարթնու այն ատեն իւրաքանչիւրին մէջ. իրար միշտ տեսնելու, իրարու հետ միշտ խօսելու պէտքը կը զգան: Ա՛լ բարեկամ կ'ըլլան:

Համակրութիւնը և բարեացակամութիւնը՝ բարեկամութեան նախնական երկու աղբիւրներն են, որ էապէս ընկերական երկու բուռն զգացումներու փոխանակութիւնն է: Երբ երկու մարդիկ, ու է առթիւ, ընկերական ուրախութիւններու կայծեր կը դրկեն յաճախ իրարու, շարունակական հոսանք մը կը կազմեն: Այն ատեն այն մարդը որ կը սիրէ, մասամբ կ'ապրի կրկնակի կեանքով և, իր սրտին մէջ պահելով բարեկամին պատկերը, կը

հետևի ուրիշ սրտի մը բարախումներուն, որուն կը զրկէ իր սրտին թրթուռները:

Ամէն մարդ բարեկամ չի կրնար ըլլալ, որքան զգայուն և փափկասիրտ ալ ըլլայ: Երկու հոգի, այս զգացումը ներշնչելու համար, պարտին իրարու յարմարիլ թէ՛ ստորիքով, թէ՛ զգացումով և թէ՛ դատողութեան համեմատութիւնով: Տարիքով իրարմէ շատ զգալի տարբերութիւն ունեցող մարդոց միջև բարեկամութիւնը անկարելի է: Եթէ այս անունը տանք այն զգացումին կամ այն սիրոյն որ ծերը երիտասարդին, չափահասը տղուն կը կապէ, արամաքանական սխալ մը կը գործենք: Բուն զգացում մը կրնայ գոյութիւն ունենալ իրենց մէջ, բայց այս՝ ակնածանք մը, երախտագիտութիւն մը կամ յարգանք մը միայն կրնայ ըլլալ:

Բարոյական և մտաւորական շատ մեծ հեռաւորութիւնը, անընկճելի արգելք մը կը դառնայ երկու մարդոց սերտ մտերմութեան, եթէ իրարու բարեկամանան. հետեւաբար, էական՝ միակ պայմանն է իրար հասկնալը, իրար լաւ ճանչնալը, և առ այս անհրաժեշտ է որ համաձայնին բարոյական գաղափարներու, կարծիքներու հիմնական մասին վրայ:

Մշակուած, զարգացած կամ առողջ դաստիարակութեամբ կրթուած մէկը, այր ըլլայ թէ կին, երբեք կարելի չէ որ գաղափարակից գտնուի սահմանափակ մտքի տէր, մտաւորական զարգացումէ և առողջ դատողութենէ զուրկ, տափակ ըմբռնումներով մէկու մը հետ. հոգեբանօրէն անկարելի է աս. կրնան բարեյոժարութիւն և բարեացակամ տրամադրութիւններ ունենենալ իրարու հանդէպ, բայց դարձեալ օր մը չէ օր մը պիտի ներկայանան այն տեսակ պարագաներ, ուր իրենց գաղափարներուն տարբերութիւնը, զգացումներուն արտայայտութիւնները, խորհելու, մտածելու և դատելու եղանակը անպատճառ սխալ գտն վրդովել այդ երկինքին ջինջ պայծառութիւնն ու ներդաշնակութեան քաղցրութիւնները, և անխուսափելիօրէն պիտի բաղխին իրարու, ուրկէ՝ անհամաձայնութիւն, ցրտութիւն և վերջ ի վերջոյ

բաժանում: Բնախօսական - հոգեբանական վերլուծումի անվիճելի ճշմարտութիւններ են ասոնք, զորս հաստատած են անցեալ և ներկայ հոգեբանները:

Խորհելու, զգալու և գործելու զօրութիւնը կամ կարողութիւնը, յանունս կ'այլազանուի կորովի աստիճանին և ուղղութեան մէջ. իւրաքանչիւր մարդու յատուկ բնածին տրամադրութիւնները կը կերպարանաւորուին իր զգացման մէջ, միջավայրին ազդեցութեան ներքեւ, ինչպէս և իր միտումներուն և անձնական կամքին համեմատ: Կարողութեան, հակամիտութեան և սովորութիւններու այս ալլազանութիւնները՝ կ'ընկերանան անթիւ անհամար զուգադրութիւններու՝ կաղմելու համար նկարագրելու: Երբ կ'ըսուի թէ այս ինչը նկարագրի տէր մէկն է, կը նշանակէ թէ օժտուած է բացառապէս զօրաւոր և յամառ կամքով մը, թէ հաւատարիմ կը մնայ այն սկզբունքներուն զորս միանգամ ընդ միշտ ընդգրկած է: Բարոյական բարձր արժանիքի մը առաջին պայմանն է հաստատուն և անկասկածեղ ընդունելու մը ունենալ: Անորոշ և երկդիմի կամ վարանոտ մարդը ինքզինքին չի վերաբերիր. ամէն ազդեցութիւններու, ամէն սպաւորութիւններու, ամէն թելադրութիւններու ձեռք խաղալիկ մըն է. իր նպատակները ողբալիօրէն կը վիժին ամուլ դիտաւորութիւններով: «Նկարագրներուն ամէնէն յուսն քնաւ նկարագրի չունենալն է», կ'ըսէ Հէրթզիկ, դերման նշանաւոր հոգեբանը:

Բարեկամութեան մեծ ուրախութիւնները՝ սրտին ամէնէն թանկագին գոհարներն են մէկ քանին կը կաղմեն: Այնքան հեշտութեան աղբիւրներ են ասոնք որ՝ զանոնք զգալու երջանկութիւնն ունեցողը սաստիկ կը յուզուի մի՛միայն դանոնք յիշելով: Ո՞րն է այն սիրտը որ տուելի արագ չի բարախեր երբ, երկար տարիներ սպասելէ վերջ, իր բարեկամը կը տեսնէ յանկարծ ողջ առողջ, ուրախ, զուարթ և սիրալիր: Այդ վայրկեանին անցելոյն յիշատակները կուգան կը շփոթին ուրախութեան այս աւելին մէջ, որով սիրտը այլ ևս չի կրնար դիմադրել և կը պոռթկայ: Աչքերնին զի-

րար կը վնասեն, բայց արցունքի քող մը կը ծածկէ հորիզոնը՝ գաղջ մշուշով մը։ Շրթունքներն կարծես պիտի ուզէր խօսիլ։ Բայց կը զոհանան միայն վսեմ, գերազոյն համբոյրով մը։ Թեւեռներն կը զրկախառնուի, իրարու մօտեցնելով երկու բարախուն սրտեր որ իրար հասկցած էին։ Կը հառաչեն, կը խնդան, կուլան, իմաստէ զուրկ ընդհատ բաւեր կ'արտայանեն։ Ի՞նչ փոյթ։

Այն որ անկարող է այսպէս սիրելու և այս տեսակ վեհ ուրախութիւններ զգալու, մեծապէս դժբախտ է։

Բարեկամութեան մեծագոյն հաճոյքներէն ուրիշ մէկն ալ, յուսահատութեան կամ դժբախտութեան վշտաւիթ պարագաներու մէջ անոր տուած սրտապնդումն է որ, փիլիսոփայական տեսակէտով, բացասական հաճոյք մըն է։ Օրինակի համար, երբ մէկը գտնուի այն տեսակ փոթորկներու մէջ, սրտի այն տեսակ ալեկոծումներու մէջ, որոնք մարդկային կեանքին ովկիանոսն յատակն ի վեր կը յուզեն, իր կեանքին դիւրարեկ նաւակը, երկար ատեն մաքառելէ և անտանելէ յետոյ, կը խորտակի վերջ ի վերջոյ խարակի մը վրայ։ Նաւաբեկեալ է։ Կարեւորութիւն չունի թէ ո՞ր կողմէ կուգար հովը որ խորտակեց իր կայմերը և պատուեց իր առագաստները։ Մարդոց նախաճն էր այս թէ կեանքի զեղծումը։ Կարեւորութիւն չունի։ Այն հոգին որուն հաւատարմութեանը, անկեղծութեանը վստահելով տուած էր իր սիրտը՝ զինքը մատնեց։ չի կրնար այլ ևս գիմարել այն սնհուն վշտին որ զինք չորս կողմէ կը պաշարէ։ Չարչարուած, սանջուած, մատնուած, որքան պիտի փափաքէր ընկըզմիլ այս ծովին մէջ, որ զինքն անգթօրէն կը խարաղանէ իր անկարեկիր ալիքներուն գազաթին վրայ։ Ո՞վ ուրեմն այն ատեն, կեանքին հասցէին իր ուզողած անէճքներուն մէջտեղ, որ զինքը ջախջախել պիտի տային այն երկինքին միջոցաւ, — եթէ համբերատար չըլլար նոյն ինքն այդ երկինքը, ինչպէս այն ամէն բան որ յաւիտենական է —, ո՞վ ուրեմն այն ատեն իրեն կը մօտենայ և, խլելով մահէ մը զոր կեանքէն շատ նուազ անգութ կը դառնէ, զինքը ծովեզերք կը բերէ։ Ո՞վ կը չորցնէ և կը տաքցնէ զինքը։ Իր բարեկամն է այն որ, չկրնալով կռուիլ փոթորկին հետ, սչ ալ արգիլել հովերը, անձկանօք հետեւեցաւ բարեկամական անկեղծ սիրոյ մը, փափուկ զգացումէ մղուած՝ որ ընկճիլ չի դիտեր բնաւ։ Իր բարեկամն է այն որ կը հակի հիմայ իր վրայ, ուշադիր դիտելով անոր սրտին ամէն մէկ բարախումներուն և անձկութեամբ սպասելով շարժման մը, հառաչանքի մը։

Կուլայ այն ատեն, և իր առատ արցունքները անոր արցունքներուն կը խառնուին, ինք ալ կուլայ ուրախութեան, տեսնելով որ զայն ազատեց։ Եւ կը բացագոնչէ։ «Ես ի՞նչպէս փափաքեցայ մահուան, ես որ ասանկ անկեղծ բարեկամ մը ունիմ։»

Եւ արդարեւ որքան ատեն որ մարդ անկեղծ, ճշմարիտ բարեկամ մ'ունենայ, պէտք չէ որ կեանքէն յուսահատի, և պէտք է մեր արտէն փափուկ նետարդ մը, զգայուն երակ մը առոյգ և առնական ըլլայ, որպէս զի զգանք բարեկամական այս ազնիւ զգացումը։

«Բարեկամութիւնը ապականուած սիրտերու համար չէ», կ'ըսէ Լօրա Պայրըն։ Բարեկամ մը երբեմն ծնողքէ մ'աւելի սիրելի է։ Եթէ կը պաշտպանենք հասարակաց կարծիքին չարակամութեան դէմ անոնք որ մեզի արեւակից են, ինչո՞ւ ուրեմն չպաշտպանենք անոնք որոնց կապուած ենք փոխադարձ համակրութիւնով, գաղափարներու և զգացումներու համունմանութիւնով մը։

Պէտք է պաշտպանենք մեր բարեկամները, գիտնալով հանդերձ անոնց թերութիւնները։ Վասն զի եթէ անսարքները անոնց յոռի կողմերը կը տեսնեն, մեզի՝ իրենց մտերիներուն՝ կ'իյնայ ի վեր հանել անոնց գեղեցիկ, ընտիր յատկութիւնները։ Ճշմարիտ բարեկամ մը պէտք է անպաշտ նուիրական ըլլայ մեզի, որ եթէ դժբախտ պարագաներ հարկադրեն խլել մեր բարեկամութեան կապերը, մենք դարձեալ, ի յարգանս անցելոյն, պարտինք չնսմայանել այն անունը որ մեզի սիրելի եղաւ։

Մտերմութեան և սրտազեղման վայր-
կեաններու մէջ մեզի վստահուած խոստո-
վանութիւնները կամ գաղտնիքները պար-
տինք հաւատարմօրէն պահել, նոյն իսկ
երբ իրար չտեսնենք, իրար չսիրենք այլ
ևս: Բնաւորութեան, առողջ նկարագրի և
սրտի ազնիւ զգացումներու ինչ տեսակ
անկում պիտի ըլլար հակառակ պարագա-
յին: ⁽¹⁾

Չարախօսել մէկու մը վրայ, բամբասել
զայն որ մեր բարեկամը, մեր սիրելին
եղաւ, ինքզինքնիս ստորնացնել չպիտի
ըլլար:

ԼԵՒՈՆ Յ. ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈՒԷՏ Խ. ՄԻՍԱԳԵԱՆ

(Անտիպ Բերրուածներու առթիւ)

Բ.

Միաքեան տարագրեալ՝ երկարօրէն
կ'ապրէր Բարիդի մէջ. ճգնաւորի կեանքը
կ'ապրէր, գիտութեան մէջ առանձնացած:
Պոլիսը հրապուրիչ էր, հայրենիքի սէրը
այն մեծ կրակն էր որ բռնկած էր իր սրտին
մէջ. հեռուէն հալումայ կ'ըլլար իր Սկիւ-
տարին համար: Քերթուածներու շարքին
մէջ ունի պանդխտութեան սա երգը.

«Հասեալ վրիժապատ
ի պանդխտութեանս
Ահաւասիկ յաւատս,
Գրեալ արդ անյոյս
Կըսեալ 'նդ ծանուրեամբ
Բախիս' յափն ի կոյս,
Ուր ինձ զաւերակ
Կալայց ի դադար
Իբրեւ զքրիստոս.
Ձի անդ յախեալ
Խանձարուրս եղև
Յոյեից կայսն,
Եւ պաշտպատանք
Սիրելեաց իմոց
Ի սպառ անժառանգ:

(1) Տես «Տաճար»ի Օգոստոս 7 եւ 14 թիւերուն
մէջ ՎԻՇԵՐՔ յօդուածը:

Անդ սակայն երեկ
Մընային ինձ դեռ
Հոգիք անձկաբեկ.
Անդ գրգռանք փողոցում
Այգորեի զիս
Երբեմն մանուկ.
Անդ համարոյր մօրկանս
Ոգեւորեի
Չորդիս սիրական.
Անդ հայր միսն
Յուսայր յես մահուան
Կեալ յորդի իւր յիս.
Անդ հասակակից
Սէր չմտալ եւ պիտի
Սուգեալ ի քախիծ՝
Աղաւնոյ գունակ
Չանցելոյն կոտորեալ
Մնչեք զյիշատակ:
Անդ ի սիրելի
Յեիցս ոյ ոյ ե
Արդ միկնել ի մի:
Սէր երանային
Յապաղմամբ իմով
Թեւածեալ յունցին,
Ըզնայրս յուսահատ
Կատօսից իւրեանց
Թողեալ անապատ:
Անդ աւասիկ արդ,
Մուսայր ցանկալի,
Փութալ ե ինձ պատ,
Եւ յարսաւաղաց
Թափուր յամայիս
Երեւալ պարայած՝
Չքսուերս անձկալիս
Նոցիկ հաշտ առնել
Հեծուրեամբ սրտիս:
Հաշտ եւ դու ահաւր
Հայեաց ի մտիս,
Թե զնաւ անդ որչաւ,
Ձի ուրուաց անցին
Երգ ըստիսական
Քեւ յիս ազդեցին:»

Պարզ ս. վճիտ հայրենի սէրը կը տրոփէ
այդ երգին մէջ. համաստութեամբ հանգերձ
կը սիրուի այն. Յանգապալտ մըն է, պա-
րարտ յանգերով զարդարած է իր երգը,
ձեւին ու զոյններուն բացարձակօրէն անու-
շաղիք է մնացած:

Քերթուածներու հոգեբանութիւնն այնքան
պարզ չէ. ըստ աւելին թելադրութեան
կը մտածեն, կը դատեն, կը գործեն, կու-
լան և կը զուարճանան. ու շատ անգամ
իրենք անկարող են ողջմտութեան մէջ
սահմանափակուելու: Միաքեան սոյդ բարդ

հոգեբանութիւնն արտայայտած է իր կեանքին մէջ:

Չէ՞ որ բանաստեղծը իր քնարին վրայ ամէնէն աւելի կը գուրգուրայ սիրոյ լարին վրայ: Հետաքրքրական է զիմանալ թէ ինչպէս մտածած է սիրոյ վրայ: Ինքը երգիծող մըն է. ինքը միջակութեանց առջև առիւծի պէս մոնչող, ինքը կենցաղով ճրգնաւորի կեանքը սիրած է. սակայն ինչ պաշտում ունի սիրոյ բազմինն առջև:

Իր սիրոյ հոգեբանութեան վերլուծումը կը կարգանք իրեն գրած սա ռումանաւորին մէջ.

«Յաւուր՝ յորում ես ըզսաղս իմ զայստիկ Դըրգոնայ յայլոց ի գիւր հորշմեմ աւաւիկ, Վարսի համօրեմ ցատուցելոյս զագարան Դեռ եւս բուխի եմ որպէս զաւուրդ մանկութեան: Թեպէտ ոչ ես մանուկ իցեմ արդ՝ սիօս՝ Յորեղինիս հասեալ Տերաւր ի յամրոկ, Ընդ յաթմառքիւն ներանձնակաւ խորհրդոյս Տարիմաւորաց մի՝ շրեւցեմ սիօսի ի յոյգ: Յարդ զամուրեւոյ կեցեալ կենցաղ անձանձիւ, Աս ոչ կուսի յաժիւն զաղիսա ի խընդիւր, Եւ այրիս մեր ուր գիւրսոսիւնըն իսցսեմ, Աղաւեսցեմ շահընկալ զալն հիւնեմեան, Ձի խորհելով մերք ի նոսա մըթաղիւր, Դործօն մըշակս հանցէ ըստկ ի հունձս իւր: Ոչ, օ՛ն եւ օ՛ն արագէ ինձ Արամազ, Ձի չեմ ինձ քանի զհարսանեկան խնդրոց աս: Այլ ըզվարսիցս իւրք իմոց եւ զմօրուաց Ձոյց օտարին հեռ ի պայտար զիս մըղեաց. Վերջոնեցեալ ապա իրացն ի սկիզբն անդ, Եւ անաշտ ի վեճն իցեմ մանաւանդ: Մի՛ սընցից. զարիւցեալ եւ երեւմն իմ խոխիսն ի նունէ, հողաւիւրեայ սերափիմ, Եւ միւն յերոտոյ քեւակոխեալ ի զաւեակ Ըզրոց սիւրն զգացի՝ հոգւոյս անապակ, Հարցի զեւ երկիւղագին, Եւ անպարծ Թե՛ մարթի՞ ինձ յուսալ ի սեր փոխադարձ, Եւ չիցէ՞ յիս համոյ արդեօք ինչ նըմալ, Ձի քարեխօս առ իւր կացցէ զկողմեայ: (Այս է անուն սաղեսակաւ փերդոյիս, Ի ծնէ զիս մօրս յորոշելով Աղոնիս): Եւ ծպիս ի դիմս Որ՝ մի հեղեղ եւ մի շուրջ զարուրեւոր, «Այդ, առ, է ինչ՝ համոյ ինձ ի քեզ, Այն զի համայր քախսէ նպասեալ՝ մեղուակն եւ. Այլ շնորհ քո այդ քաղց ի սեւիլ արդարեւ Մի երթիս ինձ համարեցի մեծ պարգեւ. Ձի յոր հայիս ո՞ր՝ նա յաւեծ քերտիս Թե՛ յի՛նքն արդեօք աշուտ յուրի ի սրտէ. Եւ քե երկու իցեմ կանայս հանդիպ ինչ, Խաղաղութիւն կացցէ առ մեզ միշտ անգոյ.

Ձի նեղաւոր իմն է հայեացիդ անուշակ, Որ զհայելոյ պատէ յաճախ զմաշակ: Յոյժ նախանձոն եղով ի քնէ իմ ի սեր Կեանք հանապազ ինձ եղիցի վշտմբեր, Թե՛ ի հայել առն իմում յիս ի կին իւր, Եւ հայիցի միանգամայն ի կին հիւր. Լաւ է ապա խաղաղութեամբ կեալ հեռի Բան ի մօտոյ շինել ճարակ մեզ հեռի:» Ձայս հրաժեշտի ընկալեալ քան ի նունեայ, Կորագրոյիս ի հայելին մօրս մասեայ Ի սեսանել. . . . այլ զի՞նչ արդեօք, հե՛ք Նարկիս, Որ ի սեսիլ քան պատկերիդ հիւնմանիս: Տեսի ի նմա զԱղիկիթիայ գեղուդէջ Դիւօֆըն յալի փոխաբերեալ ի հըրեշ, Եւ նա մեղուակն յառաջագոյն, իբր եւ սոր, Ձոր երկմբաց ինքնին ստուգել չէ անմարք. Այլ շրացեալ եւ յայնժամ յերկուց նա յայց, Որոց յերկուս քաժանելով հայեցում, Յերկուս քեւեռս յընդդիմակացս ընթանալ Երկուսեան հանգոյն կառացն եզնըկան: Ըզգեսնելով զիս կորանաց ամօրոյ, Այլափրկեալ էի ներսոս ու արտաքոյ. Եւ հարթուցեալ յանձին իմոյ սեպեմէ, Թողի ի նոյն ըզհայելին եւ զնունէ, Ոչ եւս ի կին մըթաբերեալ, Եւ զամս քան Ոչ եւս ուրեք յեալ հայելոյ յանդիման:»

Այս բանաստեղծութիւնը գրականո՞ւ է է հիացում մը չունի, բայց իր մէջ կը տեսնենք աշխարհը հոգեբանութիւն մը, հայելին է այդ ուր կը դիտենք Միսաքեանի մտքին և սրտին պատկերը:

Սրատով է. կատարելութեան համար երկայնամիտ, յամառ աշխատութիւն պէտք է. տնաս պատանին նման է ճանգուղի որ տակաւին իր բոյնին մէջ ըլլալով՝ խոյս չի կրնար տալ. Օրինակ կը բերէ ըսելով «Ձի և Մէտնեանն չեղեւ հայր քերթող ի խանձարուրս անդ» . և այդ պատճառաւ է որ ինքը համբերութեամբ երկարօրէն աշխատած է, աճապարելով գրական ասպարէզի մէջ չէ մտած, որով իր հեղինակութիւններն անսխալ են մնացած:

ԱՅՏՈՒՇԱՆ

«ՏԱՃԱՐ»Ի ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Առ բաժանորդ ոմն որ օգնած է «Տաճար»ին.—Թերթիս արտօնաւորեց հասցիին զըրկուած գրութիւնն ստացուած է: Վստահ կրնաք ըլլալ որ ձեր բաղձանքները մերն ալ են: Տաճարի հրատարակութեան միակ նպատակն է ժողովրդեան հոգեւոր շինութիւնը: Փափաքելի եւ միայն որ աւելի ճշդուէր քե՛զի կարգի հրատարակութեանց կ'ակնարկէք:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Թերթերու մէջ կը կարդանք թէ Իզմիրի առաջնորդ Տ. Մատթէոս Ծ. Վ. Ինձէւանի հրաւերով, նոյն քաղաքի առաջնորդարանին մէջ կրօնական համագումար նիստ մը տեղի ունեցեր է, խորհրդակցութիւններ կատարելու համար կրօնական բարենորոգումներու խնդրին վրայ: Թեր ու դէմ երկար խորհրդակցութիւններէ յետոյ, ժողովը միաձայնութեամբ որոշեր է տեղեկագրել Պատրիարքարան թէ ներկայ խառնակ պարագաներու մէջ, մինչ շատ աւելի կարեւոր և ստիպողական խնդիրներ կան կարգադրուելիք, ապաժամ է զբաղիլ կրօն. բարենորոգմանց հարցով, և խոհանութիւն է ապագային ձգել այդ ծրագրին իրականացումը:

Շատ բանաւոր կը գտնենք այն եզրակացութիւնն որուն յանգած է Իզմիրի հոգեւորականութիւնը: Եկեղեցական բարենորոգման համար Պոլիսէն և Գաւառներէ հասած ծրագրերը, ընդհանրապէս զուրկ լուրջ և բազմակողմանի ուսումնասիրութեան մը արդիւնքը ըլլալու առաւելութենէն, տարօրինակ առաջարկներ կը բերեն, ոմանք այնքան երկրորդական կէտերու մասին որ քարոզիչի մը կամ աւագերէցի մը պարզ տնօրէնութեամբ կրնան կարգադրուիլ, իսկ ուրիշներ՝ դաւանաբանական-վարդապետական խնդրոց մասին, որոնց վրայ խոսելու ձեռնհասութիւնը և հմտութիւնը չունին ո՛չ սուաշարկողները, և ոչ ալ այդ առաջարկութիւնը քննելու կոչուող Մարմնոյն անդամոց ստուար մեծամասնութիւնը: Ասիկա չի նշանակեր թէ Եկեղեց. բարեկարգութեանց պէտք չկայ բնաւ. այլ թէ այդ բարենորոգմանց պէտք է սկսիլ նախ եկեղեցականութիւնը բարձրացնելով նիւթապէս թէ բարոյապէս, երկրորդ՝ վարժարանաց մէջ կրօնական և բարոյական ուսմանց տալով իրենց արժանաւոր տեղը, և վերջապէս՝ երրորդ՝ պատրաստելով ամուսնական օրինագիծ մը հինէն ի վեր գտնուած օրէնքներն ու կանոնները լուրջ քննութենէ մը անցընելէ ետքը:

Ասո՛նք են անհրաժեշտը և ստիպողականը:

Ճշմարիտ զարգացումի և ճշմարիտ հաւատքի տէր եկեղեցականութիւն մը՝ յառաջիկային շատ դիւրաւ պիտի կրնայ Հայ Եկեղեցիէն վերցնել ինչ որ օտարամուտ է և չի համապատասխաներ մեր երանաշնորհ Նախնիքներու հաստատած կարգուսարքին:

ԵԿԵՂԵՑԱՍԷՐ



ՀԱՆԳԻՍ

Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ-Ս. ԱՐԲ. Ի ՎԵՀԱՊԵՏԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԹԻՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՍԻ

Երուսաղէմէն Հոկտ. 5 թուով քառուած հեռագիրներ, որ հեռագրական գիծերու աւրուելուն հետեւանօք Հոկտ. 8 իրիկուան միայն հասան Պատրիարքարան — երբ արդէն Տաճար տուած էր —, կը գուժեն մահը Երուսաղէմի Ս. Յակովբեանց Առաքել. Աթուոյ Պատրիարք Տ. Յարութիւն Ս. Արքեպ. Վահագնատեանի, որուն ծանրապէս հիւանդ ըլլալը նախորդ շաբթու ծանուցուած էր հեռագրով, և խառն ժողովոյ որոշմամբ Ս. Պատրիարք Հայրը հարկ եղած հրամաններն հեռագրաւ հաղորդած էր Երուսաղէմի Պատր. տեղապահի խորհրդական Տ. Տրդատ Եպ. Պալեանի:

Տ. Յարութիւն Ս. Ի վախճանմամբ կը փակուի կէս դարու գործունէութեան շրջ-

ջանքն, ինքն ըլլալով Մատթէոս Ա. Կաթողիկոսէն ձեռնադրուած ամէնէն երիցագոյն և միակ եպիսկոպոսը: Տ. Յարութիւն Ս. Ի մահուան լուրը վերջնականապէս ստուգուելէն ետքը, Շք. օր Խառն Ժողովը արտասովոր նիստ գումարեց նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և մասնակցութեամբ Աղգ. Ժողովոյ Մայր Դիւանին, որուն կողմէ ներկայ էին Պարգև Փափազեան, Հրանտ Ասատուր և Վահան Թէքէեան էֆէնդեր: Ժողովը կարգաւորով Տ. Տրդատ Եպ. Ի Հոկտ. 8 թուականով Երուսաղէմէն զրկած հեռագիրը, որով կը ծանուցանէր թէ նոյն օրը՝ համաձայն Կեդրոնէն տրուած հրահանգին՝ բոլոր միաբանութեան և Տնօրէն Ժողովին ներկայութեանը, հանդուցեալ Պատրիարքին զոյքերը ցուցակագրուած և կնքուած են: Յետոյ ձեռք առնուելով տեղապահութեան խնդիրը, երկար խորհրդակցութենէ ետք Ժողովն այն եզրակացութեան յանգեցաւ թէ՝ Տ. Յարութիւն Ս. Պատրիարք վերջէս իր ծերութեան պատճառով զործերը վարելու անկարող ըլլալով, Տեղապահ Տ. Դանիէլ Եպ. Տեղապահի պաշտօնը վարելու ձեռնհասութեամբ ներկայացուած և ըստ այնմ վաւերացուած է, հետեւապէս հարկ չի մնար նոր տեղապահի ընտրութեան, և պէտք է շարունակէ իր պաշտօնը և նախագահէ նոյն ընտրութեան: Այս իմաստով հեռագրուեցաւ Երուսաղէմ, նաև որոշուեցաւ նոյն իմաստով գրել առ Կառավարութիւնն ուղղուելիք թագրիրը, և խնդրել որ հրահանգ տրուի Երուսաղէմի իշխանութեանց, հարկ եղած գլխութիւններն ընծայելու Պատր. ընտրութեան միջոցին: Այս թագրիրը մատուցուեցաւ Բշ. օր, ծանուցուելով միեւնոյն ատեն որ Տ. Դանիէլ Եպ. Էջմիածին գաղտնի է և ի մօտոյ պիտի վերադառնայ իր Աթոռը: Կրօնից տեսուչ Պէնա պէյ յայտարարած է թէ Դատական նախարարութիւնն այս մասին առարկութիւն չունի, քանի որ Տ. Յարութիւն Պատրիարք իրեն համար գոյութիւն չունէր արգէն, և պատասխանատու եկեղեցական մը կը գտնուի զործի ղեւի, որ պիտի շարունակէ պաշտօնը, մինչև որ Աթոռին

վերջնական աէրն և պատասխանատուն ընտրուի:

* * Տ. Յարութիւն Ս. Ի մահուան առթիւ մայրաքաղաքի թաղերը զրկուած չրջաբերականով յանձնարարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն կատարել հանդուց. Պատրիարքին հոգւոյն (ինչ որ կատարուեցաւ կիրակի օրը), և Ս. Պատարագի ատեն յիշատակութիւնը հետեւալ կերպով ընել:

«Եւս առաւել զեպիսկոպոսապէսն մեր եւ զպատրիարկոս Հայրապէսն Ամենայն Հայոց զՏէր Մասթոս Ս. Կաթողիկոս. շնորհեցես մեզ ընդ երկայն առուս ուղիղ վարդապետութեամբ: Յիշեա, Տէր, եւ զնոյն հանգուցեալ ծառայի քո, Տեսոն Յարութիւն Արքեպ. և եւ հանգո գնա ի յոյս երեսաց քոց: Եւ զՊատրիարքն Կ. Պոլսոյ զՏէր Եղիշէ Ս. Արքեպիսկոպոս. շնորհեցես մեզ ընդ երկայն առուս ուղիղ վարդապետութեամբ»: Իսկ Գոհութիւն քարոզին մէջ յիշատակել «Եպիսկոպոսապետին մերոյ... և սրբոյ Երուսաղէմի հանգուցեալ Պատրիարքին Տեսոն Յարութիւն Արքեպիսկոպոսի, և Կ. Պոլսոյ Պատրիարքին...»:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

Տ. Յարութիւն Արքեպ. ծնած է Եգիպտոս, 1819 թուականներուն, հաւանաբար Ղպտի սերունդէ: Աշխարհական անունն եղած է Յովսէփ: 12—14 տարեկան հասակին ծառայութեան կը մտնէ այն ժամանակուան Եգիպտահայոց առաջնորդ Տ. Կիրակոս Եպիսկ. Մնացականեանի քով, որ ի վերջոյ միասին Երուսաղէմ կը տանի զինքը: Հոն ժամանակ մը ծառայական գործերով զբաղելէ ետքը, կը սկսի ուսման պարապել, և հայկական ծէսով կը մկրտուի, ուր իբր փոքրաւոր միաբանաց շարքը կը մտնէ: Այդ միջոցներուն Էջմիւր կը զրկուի, ուրկէ Պոլիս կուգայ 1836ին: Ժամանակ մը ետքը կը մտնէ Տքգ. Համլինի բացած վարժարանը, ուր Անգլիկներէն հետաքրքրուող հետ կ'ստանայ կրօնական խորունկ ներշնչումներ, և այդ տպւորութեան տակ Ամիրիկա կ'երթայ... առաջատանաւոր, իր կրօնական ուսումը կա-

տարեկագործելու համար։ Այնտեղ մէկ կողմէ Արարերէնի դասեր տալով միւս կողմէ կը շարունակէ աստուածաբանական ուսումը։ 1845—46ին Պոլիս կը դառնայ, ամբարած ուսման հետ մէկտեղ, բաւական ալ հարստութիւն դիզած։ Պոլիս հասնելուն, կը լսէ Տ. Կիրակոս Եպիսկ. Երուսաղէմի Պատրիարք ընտրուիլը (1847), և կը փութայ Երուսաղէմ. ուր զրկուած կ'ընդունուի իբր զարդացեալ և պատուաբեր անհատ։ Նոյն տարին սարկաւազ կը ձեռնադրուի, և այնտեղ երեք տարի պաշտօնավարելէ ետքը 1850ին Պոլիս կը զրկուի, անկէ ալ Արմաշ, ուր նոյն տարին կը ձեռնադրուի վարդապետ, կոչուելով Տ. Յարութիւն Վրդ.։ Քիչ յետոյ Պոլիս դառնալով մաղթանքասաց կ'ըլլայ Մայր Եկեղեցւոյ։

1855ին Կ. Պոլսոյ Տ. Յակոբոս Պատրիարքը փոխանորդութեան պաշտօնին կը կոչէ զինքը, Խրիմու պատերազմին միջոցին դեսպանական յարաբերութեանց սկսուելուն առթիւ պէտք ծագելով լեզուագէտ եկեղեցականի։ Այդ միջոցին Խրիմեան Մղկրտիչ վարդապետի հրատարակած Արծաթի Վասպուրականին կ'աշխատակցէր կանոնաւորաբար, Անգլիկներէն թարգմանուած կրօնական յօդուածներով։ 1856ի վերջերը անդամ կ'ընտրուի Հոգեւոր Ժողովին, բայց հազիւ վեց ամիս այդ պաշտօնը վարելէ ետքը, 1857ին Հոգեւոր և Գերագոյն Ժողովներու որոշմամբ կը զրկուի Խարբերդ, և կը յաջողի միացնել անոր առանձինն Վիճակներ կազմող 4 վանքերը, (Դատեմի Ս. Աստուածածին, Ապտիւլ Մէսիհ, Սորսորի և Գուլէ), և տեղացի վարդան Վ. Բաւաջնորդ ընտրել տալով, 1858ի վերջերը կը դառնայ Պոլիս, ու կը վերստանան Պատր. փոխանորդի պաշտօնը, զոր կարճ միջոց մը միայն վարեց, որովհետեւ 1859 յունիսին Կարնոյ առաջնորդ Տ. Գրիգորիս Եպիսկ. Զօրաբաբէլեան վախճանելով, ինքը կը կոչուի այդ կարեւոր պաշտօնին, իր Վիճակը հասնելէն քիչ ետքը՝ 1860 յունիսին Էջմիածին գնաց և Եպիսկ. ձեռնադրուեցաւ Տ. Մատթէոս Ա. Կաթողիկոսէն, իրեն օժակից ունենալով ի մէջ այլոց Գաղատիոյ

Տ. Մկրտիչ Վ. Քէյֆօղեանը (յետոյ Կիլիկիոյ Կաթողիկոս)։

Կարնոյ մէջ վարած 20 տարուան պաշտօնավարութեան միջոցին՝ իբրեւ կտրուկ նկարագրով և նախաձեռնութեան ոգիով օժտուած անձ՝ օգտակար եղած է, բայց յաճախ մեղադրուած է իւր հակառակմանադրական. որովհետեւ Ժողովներու և Խորհուրդներու ձեռնարկներն իրեն համար չէին. շատ չէր խօսեր և շատ խօսողներն ալ չէր սիրեր։ Այս պատճառով հազիւ հինգ տարուան պաշտօնավարութենէ ետքը տեղացիներէն ամբաստանուելով Պոլիս բերուեցաւ, բայց քիչ յետոյ դարձեալ տեղացւոց խնդրանք իր Վիճակը դարձաւ, և կազմակերպեց տեղական Ժողովները։ Այդ միջոցներուն էր որ Կարնոյ Տ. Յակոբք. Ի մատնութեամբ Խրիմեան ամբաստանուեցաւ, և անոր պատիւ մը տալու համար Կեդրոնի երկու Ժողովներուն մէջ ծագած վէճը պառճառ եղաւ Սահմանադրութեան դադարման։ Մուշ տն առն Կարնոյ կուսակալութեան ենթարկուած ըլլալով, Տ. Յարութիւն Եպիսկ. ազդու կերպով պաշտպանեց իր բարեկամը, զոր յաջողեցաւ արգարացնել, Երկու տարի առաջ ալ (1864) Ալթամարի կաթողիկոսին սպանութեան խնդրին քննութեան համար Վան զրկուած էր։

1867ին Տ. Յարութիւն Եպիսկ. Պատրիարքարանի հրամանով իբրեւ Թրքահայոց ներկայացուցիչ Էջմիածին գնաց, Տ. Գեորգ Դ. Կաթողիկոսի օժման առթիւ, և նոյն Կաթողիկոսին միջնորդութեամբ ստացաւ Ս. Աննայի պատուանշանին Ա. աստիճանը մեծ ժապաւէնով։ Նոյն տարին երբ Խրիմեան առաջին անգամ բողոք բարձաւ Մշոյ և չրջականերու հարստահարիչ Քուրդերուն դէմ, Տ. Յարութիւն Ա. մեծապէս աջակցեցաւ Մշոյ առաջնորդին, և յաջողեցաւ համոզել Կարնոյ կուսակալը, որպէսզի կարգ մը Քուրդ ցեղապետներու Բուսիկի աքսորուիլը անհրաժեշտ նկատող տեղեկագիր մը ղրկէ Պոլիս, ինչ որ եղաւ և արդիւնքն ալ տեսնուեցաւ։

1868ին Կարնոյն Պոլիս բերուեցաւ կա-

առավարութեան կողմէ, և արդարանայով անցաւ Երուսաղէմ, ուր մէկ ամիս մնալէ յետոյ դարձաւ իր Վիճակը: 1874 հոկտեմբերին Պատրիարքարանի հրամանով Վան զրկուեցաւ, ուր շատ օգտակար գեր մը կատարեց, հաշտեցնելով Պօղոսեան և Ապօղոսեան կուսակցութիւնները: Մշոյ մէջ ալ Տ. Մամբրէ Եպ. ի և վանքին միաբանութեան միջեւ գոյացած խռովութիւնը դադարեցուց և ղանոփ հաշտեցուց: 1876ին Մշոյ առաջնորդ ընտրել տուաւ Տ. Գրիգորիս Եպիսկ, Ալէաթճեանը:

Իր Վիճակէն դուրս ունեցած օգտակարութեան հետ մէկտեղ, Վիճակին մէջ ալ մեծապէս օգտակար եղած է: 1863ին Խարբերդէն Ռուսիա գաղթող Հայերն յաջողեցաւ համոզել և իրենց տեղերը վերադարձնել, Միւս կողմէ կ'աշխատէր Օսմ. կայսրութեան մէջ արդարութիւնն յաղթանակել տալու: 1865ին Հինձք գիւղին մէջ կրօնամոլ Հայ-հոմալեականներէ խեղդամահ եղած Հայ երիտասարդին խնդրոյն առեն, մինչ կառավարութիւնը, ի յարգանս Նաբոլէոն Գ. կայսեր, խնդիրը ծածկել կ'ուզէր, յաջողեցաւ ցկեանս թիապարտութեան դատապարտել տալ ոճրագործները, որոնց մէջ էր նաև Հայ կաթողիկ վարդապետ մը. բայց միւս կողմէ գիտցած է լաւ յարաբերութիւններ մշակել եկող գացող բոլոր կուսակալներուն հետ, յարգանք ներշնչել գիտնալով՝ անոնց հետ պայքարած ատեն իսկ:

Կարնոյ առաջնորդութեանը միջոցին, ամենէն մեծ ծառայութիւնն ըրաւ սակայն Հայութեան 1877—1878ի թուրքեռուս պատերազմին միջոցին, չեղոք և լուրջ ընթացք մը բռնելով անդէ: պաղարիւնութեամբ, երբ Հայ բնակչութիւնը խանդավառուած էր, և շատեր ուսաստէր ցոյցեր ընել կը միտէին. նախընտրելի համարեց օժանդակել թուրք կառավարութեան, ցորչափ աէր էր քաղաքին, հնազանդիլ Ռուսներուն երբ անոնք տանին յաղթանակը, բայց բարեկամ մնալ Թրքաց, որովհետեւ ապագան մութ էր: Իր սոյս ընթացքը հաղորդուելով Կայս. պալատ, գնահատութեան արժանացաւ, և սոյս առ-

թիւ ստացաւ Գ. կարգի Օսմանիյէ պատուանշան: Իր մշակած լաւ յարաբերութեանց շնորհիւ տեղ տեղ յաջողեցաւ պաշտպանել իր հօտը խռովանքն կատաղութենէն:

Պաշարման ամենէն սաստիկ միջոցին տիպար հայր մը հանդիսացաւ իր հօտին, անձնուիրութեան յորդորներ կարդալով և սղքաաներուն ուտեստ և վառելիք հայթայթելով ձմռան խստաշունչ եղանակին: 1878 ինտ. 21ին Կարին անձնատուր եղաւ և Ռուսերը քաղաք մտան. այդ միջոցին Ռուսեր և ռուսասէրներ շատ քննադատեցին ղինքը, բայց դէպքերն իրեն իրաւունք տուին: 1878 սեպտ. ին ռուս բանակը մեկնեցաւ Կարինէն, և հայ և թուրք ժողովուրդներն իրարու քով մնացին: Այդ առթիւ շատ մը Հայերու գեղին Ռուսիա գաղթել, բայց Տ. Յարութիւն Եպիսկ. ամէն ճիգ ընելով հոսանքին առաջն առաւ, գաղթողներու ունեց կողմէ ձեռ իսկ ուտելով:

1879ին Կարնոյ Հայոց և Պարսից մէջ արիւնուռչտ կռիւ մը ծագելով երկու կողմէն ալ շատեր վիրաւորուեցան. դէպքը ծանր կերպարանք առաւ, և Բ. Դուռը ծանոյց դեսպաններուն: Տ. Յարութիւն Ս. յաջողեցաւ սակայն Հայոց անմղուութիւնն հաստատել և դրդիչները պատմել տալ: 1880ին երբ Սարգիս Աղաբէկեան էֆ. և Եւսուֆ փաշա իւր քննիչ Հայաստան գացին, Տ. Յարութիւն Եպիսկ.՝ Տ. Ներսէս Պատրիարքի հրահանգով և Կարնեցի ազգայնոց խորհրդակցութեամբ՝ պատրաստեց բարենորոգմանց ծրագիր մը, որ իր չափաւորութեան համար գնահատուեցաւ նոյն իսկ կառավարական շրջանակներէն: Այս միջոցին իր ցոյց տուած եռանդն ալ գնահատուեցաւ Կեդր. Սովետոյ յանձնաժողովէն:

Իր պաշտօնավարութեան երկար շրջանին շինարար առաջնորդ մը եղած է, շինելով կամ նորոգելով վարժարաններ, եկեղեցիներ և հասցնելով կալուածներ, որոնց տարեկան եկամուտը, մինչ իր պաշտօնավարութեան սկիզբը հազիւ տարեկան 150-180 ոսկի կը հասնէր, պաշտօնը թուրքացած ատեն 1600 ոսկի կը յանգէր:

Հակառակ իր այս ծառայութեանց, իր կտրուկ բնաւորութեան և ազգային իշխանութեան հեղինակութիւնն յարգել տալու համար բռնած խրոխտ ընթացքին հետեւանօք, հակառակորդներ ունեցաւ, մասնաւորապէս անգործնական և անհեռատես զատակարգէն, որոնց դոտատիւտումներէն զղուած՝ 1879ին հրաժարական իրկեց Կեդր. Վարչութեան, որ թէև մերժեց, բայց Տ. Յարութիւն Ս. տարի մը ետքը վերջնապէս քաջութեամբ պաշտօնէն, և զնաց առանձնացաւ Երուսաղէմ, ուր 1881ին անուանուեցաւ Պատր. Փոխանորդ, և 1882էն 1885 գրեթէ ամէն գործ առանձինն վարեց, կատարելով տեսակ մը տեղապահի հանգամանք, քանի որ Տ. Եսայի Պատրիարք Աթոռէն կը բացակայէր անձնական տկարութեան պատճառով:

1885 Յունուար 25ին Կ. Պոլսոյ Պատրիարք ընտրուեցաւ, և մարտ 19ին վաւերանալով, Կ. Պոլիս եկաւ: Ապրիլ 17ին երդումը կատարելով պաշտօնի ձեռնարկեց և 3 տարի 3 ամիս պատրիարքութեան պաշտօն վարեց՝ Բ. Դրան և Պատրիարքարանի յարաբերութեանց բարեօրոշման ջերմապէս աշխատելով:

Իր օրով ծագեցաւ Մեկքիսեպեկ-Մակարեան հռչակաւոր վէճը. Պէշիկթաշի գերեզմանատան խնդիրը, առանձնաշնորհմանց կրճատման խնդիրը և այլն: Ասոնց քիչ շատ նպաստաւոր լուծմանը նպաստեց իր կտրուկ ուղղութեամբ:

Կ. Պոլսոյ Պատրիարքութեան միջոցին, ընտրուեցաւ 1885 Յուլի 6ին նաեւ Երուսաղէմի պատրիարք, երկու Աթոռները չմիացնելու պայմանով:

1888 Յունիս 16ին վերջապէս քաջութեամբ Կ. Պոլսոյ Պատրիարքութենէն, ստանձնելու համար Երուսաղէմի Պատրիարքութիւնը:

Տարւոյն վերջը Երուսաղէմ հասաւ և պաշտօնի ձեռնարկեց, բայց դժբախտաբար այնտեղ կորսնցուց ինչ որ շահած էր այլուր:

Միաբանական մեքենայութիւնները զորս խորաակելու անկարող եղաւ իր ձերութեան պատճառով, ինչպէս յայտնի է առաջնորդեցին գործը մինչեւ հոն, որ Կեդ-

րոնը ստիպուեցաւ զինքը դադարեցնել պաշտօնէ և տեղապահ մը կարգել:

Երբութիւնը իրեն համար տխուր վարագոյր մը եղաւ, որ միազնեց շատ բան իր անցեալ փառաւոր կեանքէն⁽¹⁾:

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ա Յ Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ռ Ի Թ Ե Ա Ն

Դ Լ Ո Ւ Խ Է. (2)

Քրիստափոր Բարս-Մուրզա. — Միրսից Ա. Կարողիկոսէն զսած ընդունելութիւնը. — Բառաձայնի մոտեցր էջմիածնայ տաճարին մէջ. — Մակար Եկմալեան. — Ներսէս Շահաւեան. — Տիգրան Չուհաճեանի վերջին օրերը. — Ռեքեոս Փալիպեան. — Անուանի երաժշտաց մանր. — Արամ Բժշկեան. — Լեւոն Պողոսեան. — Վերջաբան:

Քրիստափոր Բարս-Մուրզա՝ որ բազմաձայն Պատարագի դրութիւնը հաստատողը պիտի ըլլար էջմիածնայ տաճարին մէջ, ծնաւ 1854ին Ուրիմու Դարասու Բազար քաղաք. հայրը թէև վաճառականութեամբ կը պարապէր, բայց անյաջող պարագաներ վրայ համեմելով՝ չկրցաւ պէտք եղած կրթութիւնը տալ իր զաւակաց, քանի որ Ուրիմու միակ վարժարանը դիւրամատչելի չէր միջին դասակարգի տղայոց: Քրիստափոր Հռոմէադաւան ծնողաց զաւակ ըլլալով՝ ստէպ կը յաճախէր Միսիթարեանց Ս. Գրիգոր եկեղեցին, ուր ծանօթացաւ Ռանբէկեան Կարապետի՝ որ եւր. երաժշտութեան քաջավարժ ըլլալով, դաշնամուրի վրայ կ'ածէր չարունակ ազգ. երգեր՝ ըն-

(1) Այս տեղեկութեանց համար օգտուած ենք մասնաւորապէս Արշակ ԿՔ. Այսօյաճեանի Բիւզանդիոնի մէջ հրատարակած կենսագրական յօդուածներու շարքէն, որ Տ. Յարութիւն Ս. կեանքը պատկերով հանդերձ, մեծապէս շահագրգռական դեպքեր կը ներկայացնեն Ազգ. Ժամանակակից կեանքի:

(2) Շար. Ասիտոգ Բիւլեկ:

կերակցութեամբ իր եղբարց։ Քրիստափոր յարմարութիւն ունենալով այդ գեղարուեստին, փափաք յայտնեց միանալու անոնց և քիչ ատենի մէջ մեծ յաջողականութիւն ցոյց տուաւ։ Երբ բաւական հմտացաւ երաժշտութեան, սկսաւ ներկայացումներ սարքել Ղարաօու-Բագարի աղ-գայնոց համար, կատարելով միանգամայն կարգադրիչի և յուշարարի պաշտօնները։ (Բազմալիք, 1902. Յով. Կարապետեան)։

Միսկան ուսումնասիրանէն շրջանաւարտ ըլլալէ յետոյ՝ հայրը փափաքելով որ հոգեւոր պաշտօնայ ընէ որդին, ուզեց Ս. Ղազարու Մխիթարեանց վանքը դնել զայն, բայց սա հոգեւոր պաշտաման կոչում չունենալով, ստիպուեցաւ կամքին թողուլ՝ որպէս զի ուզած ասպարէզն ընարէ, որով բոլորովին երաժշտութեան նուիրեց ինքզինքը։

Քրիստափոր զգալով որ իր գործունէութեան սահմանն ընդարձակելու համար չա՛տ նեղ է ծննդավայրը, 1882ին Սրիմէն ճամբայ ելաւ դէպ ի Կովկաս, հաստատապէս միտքը դնելով որ Հայոց մէջ քառաձայն երգեցողութիւնը տարածէ։ Թիֆլիզ հասնելով կը ծոնօթանայ Գրիգոր Արծրունիի (Կիմնադիր և խմբագիր Մշակ օրաթերթի. 1845-1892) որուն կը յայտնէ իր գաղափարները, և Մշակի միջոցաւ հրաւեր կը կարգայ Հայ երգչիչներուն՝ մասնակցիլ իր խմբին։ Հոն հեղինակեց 40 կտոր աղգերգեր և 33 թատերական հատուածներ՝ Արշակ Ս. ողբերգութեան հետ իրրև օրհուս երգուելու և նուագուելու համար թատերաբեմի վրայ։

Քարա-Մարդա տեսնելով որ՝ հակառակ լրագրաց մէջ եղած ազդարարութեանց՝ ո՛չ ոք կը ներկայանայ իր խմբին մասնակցելու, սկսաւ վհատիլ. բայց Քամառ Քաթիպա (Ռափայէլ Պատկանեան, 1830-1892) Ռաֆֆի (Մելիք Յակոբեան, 1835-1888) և Պետրոս Աղամեան (1850-1891) խրախուսեցին զինքը՝ յայտարարելով որ այդպիսի դժուարին ձեռնարկ մը քիչ ատենի մէջ կարելի չէ գործադրուիլ, ուստի յարմար պարագաներու պէտք է սպասէ։ Արդարեւ 1885 տարուոյ Ծննդեան տօներուն

կազմեց կարողագոյն խումբ մը, որոյ մասին իր ինքնակենսագրութեան մէջ այսպէս կը խօսի. «Կարդալով իմ անվերջ յայտարարութիւնները լրագրներում, ինձ ձօտ եկան Քամոյեանց եկեղեցու խմբապետ Միքայէլ Շալամեանցը՝ իրա եկեղեցական խմբի 8 անդամների հետ, և դերասան Վերոյը՝ 5-6 ընկերների հետ. և այս մի տասնեակ և կէս մարդկանց հետ սկսում եմ եռանդով պարապել 1885 թ. Մարտի 15, Արծրունու թատրոնում»։

Քրիստափոր Քարա-Մարդա իր գրած սիրալիր ընդունելութենէն քաջաբերալ հեղինակեց Հոդեհ, Դադրականեհ, Հոխունի համերգները, և քանիցս Թիֆլիզի մէջ ներկայացնելով զանոնք՝ Բագու մեկնեցաւ, ուր ստուարացոյց իր խումբը՝ 40ի հասցնելով նորա թիւը, յորում կը գտնուէին Ներսէս Շահլամեան և Վարդիկեան։ 1886ին առաջին անգամ իր ամբողջ խմբով Բագուի եկեղեցոյն մէջ քառաձայն երգեց Ս. Պատարագի արարողութիւնը, որ մեծ ընդունելութիւն գտաւ։

1887ին ի Պոլիս ուղևորեցաւ, փափաքելով որ Թրքահայոց եկեղց. երգեցողութիւններն ալ լսէ՝ ըստ այնմ կանոնաւորելու համար իր քառաձայնը, որոյ մասին տեսակցեցաւ նաև Սրիմեան Հայրիկի հետ՝ որ քաջալերեց զինքը, ինչպէս խրախուսած էր Վենետիկի մէջ եղած ատեն Հ. Ղեւոնդ Ալիշան՝ սո՛ւ խօսքերով. «Գեղարուեստական հեղինակութիւնները թէ աշխոյժ չը լինին, կը կորցնեն իրենց կենդանութիւնը»։ Քարա-Մարդա այս երեւելի անձանց կտրծիքը լսելով՝ աշխատեցաւ աւելի՛ աշխոյժ երգեր յօրինել։ Իր ճամբորդութեան միջոցին 60ի չափ երգեր հաւաքեց, յետոյ վերադառնալով Բագու, իր խումբը կազմակերպեց երկու սեռէ՝ որոնց թիւը կը հասնէր 150 հոգիի։

Մակար Կաթողիկոս 1889ին այցելելով Բագու՝ գոհունակութեամբ լսեց այդ երգչական ստուար խումբին քառաձայնը, որմէ ետքը սկսաւ տարածուիլ Քրիստափորի փալլուն տաղանդն ընդհանուր Ռուսահայոց մէջ, ըստ որում իր երկասիրութիւնները տարածելու համար Կովկասի գրեթէ

բոլոր քաղաքներն ուղեւորած էր: Կը պատմին թէ Թելաւ քաղաքը նուազահանդէս մը տալու համար հազիւ կարողացաւ դաշնամուր մը գտնել տեղւոյն քահանային քով, որմէ խնդրեց՝ նոյն օրուան համար փոխադրել Հայոց դպրոցը. սակայն տեղւոյն հեռաւորութեան պատճառաւ բեռնակիրները չուզելով տանիլ, ստիպուեցաւ գոմէշներով լծուած սալի մը վրայ բեռնել դաշնամուրը, և ինքն ալ փառաւորապէս բաղմամբ՝ ցորեկ ատեն հազար զփուարութեամբ փոխադրած է գործիքը, և այս կերպով յաջողուցած է սարքել նուագահանդէսը:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԶ. ՇԻՍԱՐԵԱՆ

(Շարունակելի)

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Ս. ԳՐՈՑ ԲՆԱՊԱՍՏՈՒԹԵԱՆ

Կ Ե Ն Դ Ա Ն Ի Ն ԵՐ

ՀԱՒԱԼՈՒՄՆ. — (Սաղմ. ՃԲ. 6) Երբ. Բաւթի. Յուն. Բեռիսու. Վուկասի polliconus. Տաճ. Բախամ:

Հաւալուանը երկու մեղր մեծութեամբ մաշկոտն թռչուն մըն է. սրածայր, լայն ու խոռոչաւոր 50 սանդիմեզր երկարութեամբ կտուց մ'ունի. կզակին տակ կախուած կայ կծկուած մեծ պարկ մը զոր ուզած ատեն կրնայ ընդլայնել, յորում կրնայ փողովել մեծ քանակութեամբ ջուր և ձուկ:

Հաւալուանը յաճախ կը տեսնուի Եգիպտոսի և Պաղեստինի գետերուն, լիճերուն կամ ծովերուն եղերքները. հրաշալի ճարպիկութեամբ և անսման վարժութեամբ ջուրին վրայ կը լողայ. իր անունըը կազմող ձուկերը որսալու մէջ շատ ճարպիկ և գործնական է:

Այս թռչունին և իշուն զոալու ձայնին մէջ նմանութիւն մը երեւելուն, հաւալուանին կը տրուի նաև Իշաֆրոսալ (onocrotatus) գիտական անունը: Տիրերիական լճին եզերքը յաճախ կ'երևի այս թռչունը. հարկաւորներ կան ծովուն ալ:

Քը յաճախ կ'երևի այս թռչունը. հարկաւորներ կ'երևին նամանաւանդ Տիրերիական ծովուն այն մասին վրայ որ Յորդանան գետին բերանը կը կազմէ. կը թռչին երամովին: Մոլու վրայ որսի ելած ատեն շատ հետաքրքրական է տեսնել իրենց որսորդութիւնը. ջուրին վրայ կը շարուին, շուրջանակի բլորակ մը կազմելով, և աչքերնին կը սեւեւեն ծովուն խորը ձկանց վրայ. յանկարծ մէկ անգամէն սամէնը մէկ կը յարձակին իրենց կազմած շրջանակին կեդրոնական խորութեան մէջ, և դուգադիպած բոլոր ձուկերը կուլ կուտան: Շատ վայրենի են, ասոր համար անկարելի է մօտէն դիտել զանոնք. ինչ որ իրենց մասին կը նկարագրուի և կը պատմուի, միշտ հեռուէն դիտուած և նկարագրուած է:

Հաւալուանը երբ բաւական ձուկ որսացած է և կզակին ներքեի պարկը ամբողջ լեցուած, կ'առանձնանայ եղէգներու մէջ կամ անապատին անճանաչ վայրերը, մարսելու համար հանդարտիկ իր կուլ տուած ձուկերը. թմրած և ծանրաշարժ վիճակ մը կ'ունենայ երբ որսէն դարձած առանձնացած է. երբ ուզէ կերակրել իր ձագերը, շատ դիւրութեամբ գլխու փոքրիկ շարժումով մը դուրս կը փախէ իր կրածները. երբ կը տեսնէ թէ կեանքը վտանգի մէջ է, անմիջապէս կերածները դուրս կուտայ, որպէս զի ծանրութիւնը թեթեւայ և դիւրութեամբ աղատ կ'որհնայ թռչիլ:

Անկատար հնազոյն պատմութիւն մը հաւալուան ապրելակերպի մասին. կը հաւատէ թէ ան իր կուրծքը պատուելով ձագուկները կը սնուցանէ: Ս. Օգոստինոս աւելի հետաքրքրական ձեւով աւանդութիւն մը կը պատմէ: Հաւալուանը իր կտուցին հարուածներով ձագուկներն սպաննելէ յետոյ իր բոյնին մէջ երեք օր սուգ կը պահէ. երեք օր ետքը թռչունը կուրծքին կտուցի հարուածներ տալով ինքզինքը կը վիրաւորէ, և արիւնը կը սրսկէ ձագուկներուն վրայ, որոնք ընդփոյթ կեանք կը վերստանան, այդ կենսատու արիւնը կը բաղդատուի Ս. Գրական գրուածներու մէջ Տեսաւ մերոյ վրկագործ արեան հետ թովմաս Ալուինացին իր երգարանին մէջ զՅի-

սուս Գրիստոս կ'անուանէ «Գրած Հաւա-
րումն» :

Ս. Գրքը արգիլուած կենդանիներու
կարգին մէջ կը դնէ հաւալուողը (Ղեւ. 18, Բ. Օր. ԺԴ. 17) : Ստուգիւ իր
միտը ուտուելիք միտ չէ :

Հաւալուողը իր հանգիստին մէջ ծանր
և մեղամաղձոտ երեւոյթ մ'ունի, նման
տրտմութեան և վշտի ծանր բեռան տակ
ընկճուած մարդու մը . միայն այն անա-
պատներուն մէջ կ'ապրի որուն մօտէն կամ
մէջէն ձկնաւէտ գետ մը կ'անցնի :

ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Ս. ՊԱՏՐԻԱՐԺ հօր անուան տօնա-
խմբութեան առթիւ անցեալ ՇԲ. օր բազ-
մաթիւ եկեղեցական և աշխարհական անձ-
նաւորութիւններ, Ազգ. Ժողովի, Վար-
չութեան և խորհրդոց անդամներ շնորհա-
ւորական այցելութիւններ տուին Ն. Սրբազնութեան : Տաճարի խմբագրութիւնն
ևս իր ջերմ շնորհաւորութիւնները կը
յայտնէ այս բարեգէպ առթիւ :

ՄԷՐՏԻՆԻ Հայ-հռոմէականները Ազգ.
Պատրիարքարան ուղղում նամակներով կը
ծանուցանեն թէ՛ իրենց յարաբերութիւն-
ները խզած ըլլալով Հռոմայ եկեղեցիին
հետ, «Հայոց աշխիւ ազգին միացած են
պարծանօք» : Հետեւապէս իրենց կրօնա-
կան պէտքերու գոհացման համար արաբե-
րէնի տեղեակ և քաղաքական կացութեան
գիտակ քահանայ մը կը խնդրեն :

ՇԱՊԻՆ, ԳԱՐԱՀԻՍՍՐԻ Քաղ. Ժողովը
գրով մը իմացուցած էր Պատրիարքարան
թէ տեղւոյն Գաւառ. Ժողովոյ կուսակցա-
կան անդամները չէին ճանչնար նոյն մարմ-
նոյն պաշտօնը : Ուստի Ժողովը անցեալ
չաթիւ լինելով այս խնդիրը, ի նկատ ա-
ռաւ որ այդ Ժողովին պաշտօնը վաւերա-
ցած է Ազգ. Կեդր. Վարչութեան նախորդ
Քաղ. Ժողովոյ օրով : Հետեւապէս Կեդ-
րոնը պարտաւոր է յարգել և յարգել տալ
այս վաւերացումը . ուստի իստան Ժողովը

որոշեց այս նպատակով դիմել օրինական
միջոցներու, և գործադրութիւնը յանձնեց
Ս. Նախագահին :

ՖԷՐԱՂԻ ԵՒ ԻՆԹԻԳԱԼԻ գործողու-
թեանց և Պատրիարքարանէ տրուած իմու-
խապէրներու խնդրոյն վրայ Ազգ. Պատ-
րիարքարանի վարչական և յարաբերական
դիւաններու պետերուն՝ Թէլեան և իս-
չատուրեան էֆ.ներու պատրաստած տե-
ղեկագիրը անցեալ Ուր. օր կարգացուե-
լով իստան Ժողովոյ մէջ, և որոշուեցաւ անոր
հիման վրայ հարկ եղած թագրիրը պատ-
րաստելով մատուցանել Բ. Դրան, ի պաշտ-
պանութիւն ազգային իրաւանց :

«ԲԱՅԹԻ ԳՈՅ»-Ի ԽՆԴԻՐՆ ԱՄԵՐԻ-
ԿԱՅԻ ՄԷՋ. — Ֆրէզնոյէն ուղղուած թղ-
թակցութեան մը մէջ կը կարդանք թէ Վե-
րացման Ս. Խաչի կիրակին նոյն քաղաքի
Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ տեղ-
ւոյն հայ գաղութն ընդհ. Ժողով գու-
մարելով, գրեթէ միաձայնութեամբ համա-
մտութիւն յայտնեց Ն. Ս. Սծութիւն
Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին կոն-
դակի ոգիին, որով՝ բացի եկեղեցիին պատ-
կանող խնդիրներէ, եկեղեցիին փակ մնալը
կը տրամադրէ քաղաքական-կուսակցական
հաւաքոյթներու առջև : Նոյն թղթակցու-
թեան մէջ իրաւամբ կը դիտուի հայութեան
հոգեբանական վիճակը, որով Հայ ազգն
ամէն զրկանքի, բռնութեան կը հանդուրժէ
և չի միանար դիմադրելու հոմար, բայց
երբ իր եկեղեցիին կը դպչին, յանկարծ
կ'ընդվզի և միահամուռ կուրծք կուտայ :
Թղթակցին ի վեր կը հանէ նաեւ որ դաշ-
նակցականք խիստ ցանցաւ թիւ մը ունին
հոն, և ամերիկայի Հայ-լուսաւորչական
դաշնակցականը «բացի գոցի» խնդրոյն մէջ
հետեւեալ ուղղութեան չի համակրիր, և
«գէշ քաղաքականութիւն մը» կ'անուանէ
զայն :

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՄԻՈՒԹԵԱՆ տարեկան համարատուութեան
մէջ, որ այս անգամ հրատարակուած է,
յիշուելով ներկայ տարւոյ ընթացքին թուր-
քիոյ և արտասահմանի մէջ գտած ջերմ
ընդունելութիւնը, եղած կռակներն և նու-
իրատուութիւնները, կ'եղրակացուի թէ

մուտքի տուրքէ, նուիրատուութիւններէ, և անդամովճարներու 1/6 էն զոյացած 1300 ոսկին աւելցուելով դրամադրութիւն վրայ, գումարը կը յանգի 8700 ոսկիի: Իսկ Նիմեակոն դրամադրութիւն անցնող ապրիլին բարձրացած է 10,000 ոսկիի: Այս չըջանին՝ անդամովճարներէ և արմեթուղիի տոկոսներէ են: Գոյացած է 1600 ոսկի, որուն վրայ աւելցուելով անտուկի պատրաստ դրամը են: Կը յանգի 2450 ոսկի, ուրկէ 310 ոսկի տարեշրջանի ընդհանուր ծախքերուն յատկացուած է, և 1560 ոսկի ևս նրպատու դրութեամբ է դանտուան աւելեր: Ահա՛ անաղմուկ, լուրջ դարձուեցաւ թիւն մը, և համարատուութեան օրինակիցի ողի մը, ինչ որ կը պակսի չափ մը մարմիններու: Ապա՛նով ենք թէ ողջամէտ և իրապէս բարեւեր ուղղալինք պիտի փութան անխտիր իրենց լուսման յատկացնել այս ճշմարտապէս բարեգործական Միութեան:

ՁԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԳԷՆՔԻ տակ գտնուելու միջոցը բացառիկ վիճակ նկատելով, Կրօն. ժողովը որոշած է որ տարին երկու շաբաթ, այսինքն Ծնունդին և Զատիկին մէյմէկ շաբաթ պահք պահեն միայն:

ԲԱՆԿԱԼԹԻԻ աղգ. գերեզմանատան համար Հայ-հռոմէականաց կողմէ յարուցուած խնդիրն ուսումնասիրելու համար Դատական նախարարութիւնն երկու Հայ և երկու Հայ-հռոմէականներէ յանձնաժողով մը կազմել որոշած է, որուն պատրաստելիք տեղեկագրին համեմատ, Պետական Խորհուրդն իր որոշումը պիտի տայ:

ԿՐՈՆ. ԺՈՂՈՎԸ ԴՆ. ի նիստին մէջ Արաբկիրի առաջնորդական թափուր վիճակին եւ ապառիկ ընտրելեաց ցանկ պատրաստեց Տ. Տ. Վաղինակ Թորիկեան, Սուրէն Գալէմեան և Եղնիկ Պապահան Վահրէն: Ամերիկացի Լօվէլ քաղաքին հոգեւոր հովիւ կարգեց Շաւարշ Վ. Սահակեանը: Պալատու առժամայ քարոզիչ անուանեց Տ. Հմայեակ Վ. Պաղտատարեանը: Խորհրդի և Կեսարիոյ առաջնորդարաններէն եկած եկեղեց. բարենորոգման առաջարկները որոշեց յառաջիկայ Համագումարին ներկայացնել: Ի նկատ առնելով որ Յարութիւն Վ. Շիրինեան Կեղը,

Վարչութեան անաստելով գաղտագողի Ամարիկա գացած, Բրովիտէնի մէջ պաշտօնավարել ուղած և վերջերս Պօլիս գառնալով եկեղեցականութեան պատիւն աւրատարող ընթացքի մէջ գտնուած է, որոշեց, լրացուցիչ տեղեկութիւններ ստանալէ ետքը, յաջորդ նիստին արձակել իր իր վերջնական վճիռը:

ԽԱՌՆ. ԺՈՂՈՎՈՅ ԴՆ. ի նիստին մէջ ի նկատ առնուեցաւ Ուսումն. Խորհրդոյ մէկ գիրք, որով Թուրքերէնի տեղեակ պաշտօնեայ մը յատկացնել կը խնդրէր մայրաքաղաքիս Աղգ. Վարժարանաց մասին Մէարիֆի կողմէ պահանջուած վիճակագրութիւնը պատրաստելու համար: Ժողովը Յարաք. Դիւանատան անդամներէն Միւռոն էֆ. Զաքարեանի յանձնեց փութացնել նոյն աշխատութիւնը: Տըփղիսցի բարեխիշատակ Կարապետ Վարդանեան 20,000 դր. կտակած է, տոկոսները Մշոյ Ս. Կարապետ վանքին յատկացուելու համար: Կտակաց Հոգաբարձութեան մէկ գրին վրայ, ժողովը դիտելով որ նոյն կտակի տրամադրութեանց նկատմամբ կը պակսին կարեւոր տեղեկութիւններ, արժան դատեց նոյն կտակին մէկ պատճէնը պահանջել:

ՅԱՒԱՆԻ ԴԷՊԻ ՄԸ

Տիուր գէպը մը տեղի ունեցաւ ԴՆ. օրը Ղալաթիոյ Եկեղեցւոյ շրջափակին մէջ: Խառն ժողովոյ նիստէն ետքը, երբ ատենուպէս Տքդ. Սեդրոսեան էֆ. կը մեկնէր, Ենովք Շահէն անունով երիտասարդ մը գաւազանի հարուածներ իջեցնելով անոր մէջքին, ուսին և գլխուն, վիրաւորած է զայն գլխէն, արիւնլուայ ընելով զինքը: Անմիջապէս օգնութիւն հասցուելով բժշկական դարձաններ արուեցան Տըթ և Սեդրոսեան էֆէնտի որ վիրաւորուած վիճակի մէջ տուն դարձաւ: Այս ցաւալի գէպը յուսարեկութեան մատնած է աղգ. իշխանութեան դիրքն ու հեղինակութիւնը բարձր բռնել փափաքող բոլոր լուրջ և ազգասէր սրտերը:

ԱՐՏՈՆԱՏԻՐ


ՀՐԱՅԵԱԿ ԲՆԵ. ԷԳՍԷՐՃԵԱՆ

ՏՆՏՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՋԱՐԱՐԱՐ ԲՆԵ. ԿԷՋԻՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

Համախմբաբ. Յակոբեան խան



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԸԼԸՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ . — ԿՐՈՆԻ ԴԱՍԵՐ, ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՍՆՈՅ ՎԱՐՊԱՅԵՏՈՒՄԸ: ԴԻՆ 5 ՂՐԶ .:

ՆՈՅՆ . — ԿՐՈՆԻ ՊԱՍԵՐ, ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ: ԴԻՆ 5 ՂՐԶ .:

ՏԱՂԱՆՊԱՆՈՐ ԿԵՂԻՆԱԿԸ, ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ Ե ՐԱՐՃՐԱԴՈՅՆ ԿԱՐԳԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՓՐԱՆՍ . ԼԱՆԱԳՈՅՆ ԿԵՂԻՆԱԿՆԵՐՈՒ ԿԵՄԵԼՈՂՈՒԹԵԱՄԸ, Ե ՀԱՅ ԵԿԵՂԵՍՆՈՅ ՎԱՐՊԱՅԵԱՆՈՒԹԵԱՆՑ ՀԱՄԱՃԱՅՆ ԱՎԱՐԱՍՏՈՒԹՅԱՆ Ե ԱՅՍ ԵՐԿՐՈՒ ՀԱՏՈՐ ԴԱՍԱԳԻՐՔԵՐԸ ԿՐՕՆԱԿԱՆ Ե ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԸ, ՈՐՈՆՔ ԻՐԵՆՑ ԱՄԻՈՒԹԻ ԶԵԼԻՆ ՍՈՒՅ ԱՅՆՔԱՆ ԼԱՆ ԿԻՐԱԿՈՒ ԿՐ ԽՈՏԱՑՆԵՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ Ե ԵԿԵՂԵՍՆԱԿԱՆ ՎԱՐՊԱՅԵԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ԳԱՐԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԵՐՈՒՆ ԱՇՋ ԼԱՆԱԳՈՅՆ ՍԵՂՐ ԳՐԱԵԼՈՒՎ, ՁԵՐՄԱԿԷՍ ԿՐ ԵԱՆՃՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԿՐԹԱԿԱՆ ՎԱՐԻՆՆԵՐՈՒՆ: ԵՐԿՐՈՒ ԳՈՐԾԵՐՆ ԱՂ ՎԱՆԵՐԱԳԱԾ ԵՆ ԱՂԳ. ԿԵՂՐ. ՎԱՐՋՈՒԹԵԱՆ ԿՐՕՆ. ԺՈՂՈՒԷՆ:

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ . — ԳԱՆՃԱՐԱՆ, ԸՆԹԵՐԳԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐՔ, ՍԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐՆԹԱԳՔ, 5 ՂՐԶ .:

ՆՈՅՆ, ԱՅԻՆ ԴԱՍԱՐՆԹԱԳՔ, Գ. ՍԱՂԱՐՈՒԹԻՒՆ, 8 ՂՐԶ .:

ԾԱՆՈԹ ԳՐՈՂ ԱՐԱՄ ԷՓ. ԱՆՏՈՆԵԱՆԻ ՍՈՅՆ ԸՆԹԵՐԳԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐՔԵՐԸ, ՃԱՂԱԿԱՆՈՐ Ե ԳԻՍՏԱԿԻՑ ԸՆՏՐՈՒԹԵԱՄԸ ԵՂԱԾ ՔԱՂՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅ Ե ՕՍՏԱՐ ԼԱՆԱԳՈՅՆ ԿԵՂԻՆԱԿՆԵՐԷ, ԿՐ ԵԱՆՃՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԴԱՐՈՍԳԱԿԱՆ ՎԱՐԻՆՆԵՐՈՒՆ, ԻՐԵՆՑ ՄԱՔՈՒՐ ՍԱՂԱՐՈՒԹԵԱՄԸ (Օ. ԱՐՊՈՒՄԱՆ) Ե ԱՅՆ ԱՆԹՈՒԿՈՒՆՈՒԹԵԱՄԸ ՈՐ ԳԱՆՃԱՐԱՆԻ ԱՈՒՆՃԱՅԱՍՏՈՒԿ ԱՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆ ԵՂԱԾ Է, Ե ԱՎԱՆՈՒԹՅԱՆ Ե ԱՆՈՐ ԵԱՂՈՒԹԻՒՆԸ: 5—4

ԴՐՈՑ ԲՐՈՑ, ԺՐԱԳՐԵՑ ԴԱՐԵԳԻՆ Վ. ՍՐՈՒԱՆՃՏԵԱՆԸ: ԴԻՆ 5 ՂՐԶ .:

ՍՍԱՌՈՒՆՑԻ ԴԱԽԻԹ ԿԱՄ ՄՀԵՐԻ ԴՈՒՌ, ԺՐԱԳՐԵՑ Գ. Վ. ՍՐՈՒԱՆՃՏԵԱՆԸ, ԴԻՆ 2 ՂՐԶ .:

ՍՐՈՒԱՆՃՏԵԱՆԸ ՈՂՐԱԳԻՍՏ ԴԱՐԵԳԻՆ ԵՂԻՍԿ.Ի ԱՅՍ ԻՍԿԱՏԻՍ ԳՈՐԾԵՐՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՆ ՓԻՆՈՑԻՆԵԱՆ ԵՂՐԱՐՑ ԿՈՂՄԷ: ԴԻՄԵՂ «ՍՐԱՄԱԳԸ» ԳՐԱՏՈՒՆ, ՂԱԼԱԹԻՐԱ, ԳՈՒԼԷ ԳԱՐՈՒՍՈՒ:

ԱՐԿԱՇԻ ՎԱՐԴԱՅ ՄԱՍԻԿՈՆԵՆՈՅ, ԳՐԵՑ Հ. ՍԱԽԱԿ Վ. ԹՈՒՆԵԱՆ, ՍԱՂ. ՎԻՆՆԱ, ԳԻՆ 10 ՂՐԶ .: ԴԻՄԵՂ ԴՐԸՆՃՏԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ, ՉԱՔՄԱՔՃՐԱՐ:

ԱՐԴԻ ԱՆՀԱՒԱՏՈՒԹԻՒՆԸ, ՔԱՐՈՂՆԵՐ՝ ԱՆՀԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ԴԼԻՍԱՆՈՐ ԱՈՒՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԴԷՄ: ԴԻՐԵՑ ՎԵՐ. Կ. ՅՈՒՆԱՆ Յ. ՍԻՆԱՆԵԱՆ, ԵՐԵՑ ՀԱՅ ԱՆԵՍԱՐԱՆԱԿԱՆԱՑ ԿԱՐՆՈՅ, ՍԱՂ. ՄԱՐԳՈՒԱՆ՝ ՆԵՐԱՑ Ե ՍՐԱՅԵԱՆ: ԴԻՆ 4 ՂՐԶ .:

ԴԻՄԵՂ ՄԱՐԳՈՒԱՆ՝ ՍԱՂԱԳՐԻՆ, ԿԱՄ ԿԱՐԻՆ՝ ԿԵՂԻՆԱԿԻՆ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ՀԵՌԼԵԱՆ

ԱՏԱՄԱՐՈՑ

(ՎԿԱՅԻՍ ԿԱՅԱԵՐԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԵՆ) ՊԵՂԻՔԱՅ, ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՅՂՊ ՊԻՆԱՑՐ:

ԿՐ ԴԱՐՈՒՄԱՆԷ ԱԿՈՒՅԻ ԵՆ լԻՆԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԷՆ ՍԵՍԱԿ ԿԻՆԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ. ԿՐ ՂԻՆԷ ԲՆԱԿԱՆԻՆ ԵԱՐ ԵՆ ՆՈՒՄԱՆ ԱԿՈՒՄԵՐ ԲԱՌՈՒՅԻ ԿԱՄ ՈՍԿԻ ՓԻՍՏԻ ՎՐԱՅ: ՉԱՓԷՆ ԱՆԵԼԻՓԱՍԱԾ ԱԿՈՒՄՆԵՐԸ ԲՈՒՆՈՆԻ ԿՐԵՆԷ. ԿՐ ՂԻՆԷ ՆԱԵԼ dent à pont ԱՄԲՈՂՂ ՈՍԿԻԷ ԿԱՄ ՐՈՒՄՆԵՆԷ:

ՀԻՆԱՆՂ ԿՐԵՆՈՒՆԻ ԱՄԷՆ ԵՐԵԿՈՅ ԺԱՄԸ 12ԷՆ ԱՅՆՅԵ 3 (Ը. Թ.): ՈՒՐԻՂ ԱՈՒՆՆԵՐ՝ ՄԱՄՆԱՆՈՐ ԺԱՄԱԳՐՈՒԹԻՒՆ:

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԱՅՆՅԵ ԿԷՍ ՕՐ ՃՐԻ: